Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 21-06-2024 թ. որոշմամբ
««ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2023 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝	
1.1 Լրիվ անվանումը	«ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
1.2 Գտնվելու վայրը	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ ՏԵՐՅԱՆ ՓՈՂ. 105
1.3 Պետական գրանցման համարը	222.160.811876
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2000-01-11
1.5 ՀՎՀՀ-ն	01506385
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+(374)10303300
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը	nuaca.am
1.8 Էլեկտրոնային փոստը	info@nuaca.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝	
Հայաստանի Հանրապետություն ՀՀ Կառավարություն	
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝	
Սուրեն Թովմասյան	
Մկրտիչ Մինասյան	
Սուրեն Մխիթարյան	
Վարդգես Գրիգորյան	
Կարեն Ռաշիդյանց	
Հրանտ Թադևոսյան	
Հակոբ Գյուլզադյան	
Նոննա Հովհաննիսյան	
Սուսաննա Հակոբյան	
Սուսաննա Հարությունյան	
Վահան Սիմոնյան	
Խաչատուր Խաչատրյան	
4. Կառավարչի անուն, ազգանուն՝	
Եղիազար Վարդանյան	
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	911
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝	

8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի 09.4.1.02 բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրի շրջանակներում պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի փոխհատուցում	347,359,000
	2023թ-ին ՀՀ ԿԳՄՍ Նախարարությունից Անհատույց օգտագործված գույքի վարձավճարի 20% փոխհատուցում	375,100
	ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի 09.4.1.03. բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրի շրջանակներում, սահմանված կարգի համաձայն պետության կողմից բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողներին կրթաթոշակի տրամադրում	20,134,100
	ՀՀ 2023 թ-ի պետ.բյուջեի միջոցների հաշվին լավագույն առաջադիմությամբ ուսանողներին տրամադրված անվանական կրթաթոշակ	11,999,000
	2023 թվականին 2023թ-ի սեպտեմբերի 19-ը Համալսարանի վճարովի համակարգում ընդգրկված Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների ուսման վարձավճարի փոխհատուցում	3,199,300
	2023 թվականին 2023թ-ի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և ՀՀ պետական բարձրագույնուսումնական հաստատության ուսման վարձավճարի փոխհատուցում	13,625,200
	ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի 09.4.2.03 հետբուհական մասնագիտական կրթական ծրարգրի շրջանակներում պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի փոխհատուցում	8,758,500
	ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի 09.4.2.04 հետբուհական մասնագիտական կրթական ծրագրի շրջանակներում, սահմանված կարգի համաձայն պետության կողմից հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողներին կրթաթոշակի տրամադրում	9,605,500
	ՀՀ 2023 թվականի Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի իրականացման համար պետության կողմից դրամաշնորի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցություն	243,901,900

	Գիտաշխատողների գիտական աստիճանի համար տրվող հավելավճարներ	32,000,000
	Թեմատիկ ֆինանսավորում, պայմանագիր 21DP-2F008 Բազալտային թելքերի և ածխածնային նանոկառուցվածքների հավելումներով նոր սերնդի կոմպոզիտային բետոնե պաշտպանական կոնստրուկցիաների նախագծում և պատրաստում	5,787,000
	Թեմատիկ ֆինանսավորում, պայմանագիր 21T-2H001 Մշակել կոնյակագործության թափոնների (բարդա) խտացման, կոնսերվացման և օգտագործման համալիր բնապահպանական միջոցառումների համակարգ	4,550,000
	Թեմատիկ ֆինանսավորում պայմանագիր 21T-2A139 Բնակելի կառուցապատման վերակառուցման և արդիակ.հիմն.Երևան քաղ.	4,940,000
	Թեմատիկ ֆինանսավորում, պայմանագիր 21AG-1C008 Բետոնի ֆիզիկամեխանիկական հատկությունների կառավարումն ածխածնային նանոկառուցվածքների միջոցով	28,200,000
	Թեմատիկ ֆինանսավորում, պայմանագիր 10-7/23-2DP-2F012 Միկրո և նանո չափանի մասնիկների և բազալտի թելքերի հավելումներով նոր սերնդի բետոնների ստացման և դրանց կիրառմամբ երկաթբետոնե կոնստրուկցիաներով պաշտպանական կառույցների նախագծում և փորձարկում	2,680,000
	Նյութատեխնիկ. բազայի արդիականացում ԻԿ Ֆուրյե սպեկտրոմետրի ձեռք բերման համար	20,000,000
	Միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում	66,450,900
	Միջին մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակի տրամադրում	8,006,000
	Նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում	5,364,400
	Նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթության գծով ուսանողների կրթաթոշակի տրամադրում	1,006,600
	2023 թվականին 2023թ-ի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և ՀՀ պետական միջին մասնագիտական կրթության ուսման վարձավճարի փոխհատուցում	191,000

	ՀՀ օրենքի 1146.Հանրակրթության ծրագիր ծրագրի շրջանակներում պետական աջակցության տրամադրում	163,211,300
	Տարակարգ ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում	337,100
	ՀՀ ԿԳՆ ԴՊՐՈՑ - սեփական նախաձեռնությամբ ատեստավորված ուսուցիչների հավելավճար	24,926,700
	ՀՀ ԿԳՆ ԴՊՐՈՑ - Ուսուցիչ. վերապատրաստ. գումարի փոխհատուցում	240,000
	ԲՏՃՄ /բացի մաթեմատիկայի/ ոլորտի ուսուցիչների հավելավճար	1,347,500
	ՀՀ Բարձրագույն Որակավորման Կոմիտեի պայմանագիր մասնագիտական խորհուրդներում ատենախոսությունների պաշտպանության ծախսերի հատուցում	142,000
	2023թ-ին ՀՀ ԿԳՄՄ Նախարարությունից հատկացումներ աշխատակիցների սոց.փաթեթի համար	3,838,530
	Ակադեմիական քաղաք ծրագրի Գեոդեզիական հանութագրման և տվյալների մշակման ծառայություններ	36,450,000
	ՀՀ Քաղ.շին. կոմիտե Բեռնվածքներ և ազդեցություններ ՀՀ շինարարական նորմի մշակման, տեղայնացման աշխատանքներ	12,996,000
	ՀՀ Քաղ.շին. Կոմիտե Կամուրջներ և խողովակներ ՀՀ շինարարական նորմի մշակման, տեղայնացման աշխատանքներ	6,996,000
	ՀՀ Քաղ.շին. Կոմիտե Կամուրջների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում. Հիմնական դրույթներ ՀՀ շինարարական նորմի մշակման, տեղայնացման աշխատանքներ	6,000,000
	Վարչապետի աշխատակազմին Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կարիքների համար ուսուցման ծրագրերի հետ կապված ծառայություններ	834,000
	Ջրաձոր նոր բնակավայրի ծրագրային և նախագծանախահաշվային փաստաթղ. կազմում	56,100,000
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Վճարովի ուսուցումից, լիցենզավորված գործունեությունից և այլ	152,827,351
	Դրամաշնորհային պայմանագրերից	191,871,462
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Ուսման վարձերի վճարում	1,417,338,820
	Ուսումնական գործընթացից այլ մուտքեր	5,568,472
9. Հիմնադրի ներդրումը՝		

9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
	Շինանյութեր ուսումնական	225,812
	Բանվորական արտահագուստ (Knauf լոգոյով)-M2020 16կոմպլ.	172,800
	Շապիկ Knauf լոգոյով 16հատ	27,840
	Պահարան լվացարանով Էրիկա 61սմ 1հատ	30,000
	Ծորակ լվացարանի 1հատ	11,300
	Շինանյութեր	1,120,336
	Ջեռուցման կաթսա Radiant R1K75 2հատ	2,590,000
	Մարդատար վերելակ 13 անձի համար 1 հատ	12,179,592
	Համակարգիչ և մոնիտոր 17հատ	5,916,000
	Համակարգիչ և մոնիտոր 16հատ	7,776,000
10.1.3 Ֆիզիկական անձինք		
	Խոսափող Prosound PG 42H 1հատ	55,000
	Միկշերային վահանակ SS Alchemix 402 1հատ	155,000
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի 09.4.1.02 բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրի շրջանակներում պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի փոխհատուցում	375,018,200	
2023թ-ին ՀՀ ԿԳՄՍ Նախարարությունից Անհատույց օգտագործված գույքի վարձավճարի 20% փոխհատուցում	375,100	
ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի 09.4.1.03. բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրի շրջանակներում, սահմանված կարգի համաձայն պետության կողմից բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողներին կրթաթոշակի տրամադրում	19,907,500	
2023 թվականին 2023թ-ի սեպտեմբերի 19-ը Համալսարանի վճարովի համակարգում ընդգրկված Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների ուսման վարձավճարի փոխհատուցում	3,199,300	

2023 թվականին 2023թ-ի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և ՀՀ պետական բարձրագույնուսումնական հաստատության ուսման վարձավճարի փոխհատուցում	13,625,200
ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի 09.4.2.03 հետբուհական մասնագիտական կրթական ծրարգրի շրջանակներում պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի փոխհատուցում	9,309,500
ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի 09.4.2.04 հետբուհական մասնագիտական կրթական ծրագրի շրջանակներում, սահմանված կարգի համաձայն պետության կողմից հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողներին կրթաթոշակի տրամադրում	9,605,500
ՀՀ 2023 թվականի Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի իրականացման համար պետության կողմից դրամաշնորի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցություն	221,243,418
Գիտաշխատողների գիտական աստիճանի համար տրվող հավելավճարներ	31,899,626
Թեմատիկ ֆինանսավորում, պայմանագիր 21DP-2F008 Բազալտային թելքերի և ածխածնային նանոկառուցվածքների հավելումներով նոր սերնդի կոմպոզիատային բետոնե պաշտպանական կոնստրուկցիաների նախագծում և պատրաստում	6,830,000
Թեմատիկ ֆինանսավորում, պայմանագիր 21T-2H001 Մշակել կոնյակագործության թափոնների (բարդա) խտացման, կոնսերվացման և օգտագործման համալիր բնապահպանական միջոցառումների համակարգ	7,324,000
Թեմատիկ ֆինանսավորում պայմանագիր 21T-2A139 Բնակելի կառուցապատման վերակառուցման և արդիակ.հիմն.Երևան քաղ.	4,779,700
Թեմատիկ ֆինանսավորում, պայմանագիր 21AG-1C008 Բետոնի ֆիզիկամեխանիկական հատկությունների կառավարումն ածխածնային նանոկառուցվածքների միջոցով	32,340,600

Թեմատիկ ֆինանսավորում, պայմանագիր 10-7/23-2DP-2F012 Միկրո և նանո չափանի մասնիկների և բազալտի թելքերի հավելումներով նոր սերնդի բետոնների ստացման և դրանց կիրառմամբ երկաթբետոնե կոնստրուկցիաներով պաշտպանական կառույցների նախագծում և փորձարկում	2,680,000
Միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում	68,611,500
Միջին մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակի տրամադրում	7,960,900
Նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում	5,510,600
Նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթության գծով ուսանողների կրթաթոշակի տրամադրում	995,300
2023 թվականին 2023թ-ի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և ՀՀ պետական միջին մասնագիտական կրթության ուսման վարձավճարի փոխհատուցում	191,000
ՀՀ օրենքի 1146.Հանրակրթության ծրագիր ծրագրի շրջանակներում պետական աջակցության տրամադրում	163,211,300
Տարակարգ ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում	334,300
ՀՀ ԿԳՆ ԴՊՐՈՑ - սեփական նախաձեռնությամբ ատեստավորված ուսուցիչների հավելավճար	25,532,400
ՀՀ ԿԳՆ ԴՊՐՈՑ - Ուսուցիչ. վերապատրաստ. գումարի փոխհատուցում	240,000
ԲՏՃՄ /բացի մաթեմատիկայի/ ոլորտի ուսուցիչների հավելավճար	1,347,500
ՀՀ Բարձրագույն Որակավորման Կոմիտեի պայմանագիր մասնագիտական խորհուրդներում ատենախոսությունների պաշտպանության ծախսերի հատուցում	352,000
CECOFORMA SA / TAIEX ուսումնական այց ճանապարհային ենթակառուցվածքների ճանապարհային անվտանգության աուդիտի ձեռնարկի մշակման վերաբերյալ	136,150
Հայաստանում և Ղրղզստանում աշխարհատեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում միջառարկայական հետբուհական ծրագրերի մշակում և հետազոտական ցանցերի ամրապնդում ERASMUS+ GeoTAK Univer. Politecnica De Valencia	8,448,783

Կարողությունների զարգացում ճարտարապետական ժառանգության կայունությունը ապահովելու նպատակով ERASMUS+ SAH Univer. Politecnica De Valencia	4,419,833
Ճարտարապետության և քաղաքացիական ճարտարագիտության կրթության վերափոխումը կայուն մոդելի ERASMUS+ TACEESM Univer. Politecnica De Valencia	8,884,231
Հետազոտական համագործակցության հնարավորությունների ընդլայնում (SI-WORC) LINKOPINGS UNIVERSITET SE-581 83 PROJECT AUSE 230	1,612,823
Հայաստանի և Ռուսաստանի բուհերում աշխատանքի վրա հիմնված ուսումնառության համար ճկուն, նորարարական և պրակտիկ համակարգի ստեղծում Liepaja University Latvia ERASMUS FLEX WBL	14,601,961
Իրական և վիրտուալ միջավայրերի թվային միացում UNIVERSITAET SALZBURG KAPITELGASSE - APPEAR Academic Partnership - Devision	6,827,175
Ինժեներական համակարգերի մոդելավորման, նախագծման և կառավարման խելացի լուծումների ապահովումը և կրթական ծրագրերի արդյունավետության բարձրացումը լաբորատոր փորձասարքերի համալրմամբ: ՊՀ-3/23-CIF SMARTLAB	2,804,073
Հետբակալավրի կրթության փոխակերպումը հանուն կանաչ և կայուն ապագայի T-GREEN	99,410,494
Ջրաձոր նոր բնակավայրի ծրագրային և նախագծանախահաշվային փաստաթղ. կազմում	56,100,000
Ակադեմիական քաղաք ծրագրի Գեոդեզիական հանութագրման և տվյալների մշակման ծառայություններ	36,450,000
ՀՀ Քաղ.շին. կոմիտե Բեռնվածքներ և ազդեցություններ ՀՀ շինարարական նորմի մշակման, տեղայնացման աշխատանքներ	12,996,000
ՀՀ Քաղ.շին. Կոմիտե Կամուրջներ և խողովակներ ՀՀ շինարարական նորմի մշակման, տեղայնացման աշխատանքներ	6,996,000
ՀՀ Քաղ.շին. Կոմիտե Կամուրջների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում. Հիմնական դրույթներ ՀՀ շինարարական նորմի մշակման, տեղայնացման աշխատանքներ	6,000,000
Վարչապետի աշխատակազմին Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կարիքների համար ուսուցման ծրագրերի հետ կապված ծառայություններ	834,000

Ուսումնառության կազմակերպում	1,446,856,529
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	2,725,802,496
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	2,725,802,496

Նշումներ՝

Հոգաբարձուների խորհրդի անդամներն են նաև՝ Արմեն Ղուլարյան, Ալֆրեդ Քոչարյան, Քրիստինե Ղալեչյան, Նաիրի Հարությունյան, Վլադ Ասատրյան, Գագիկ Վարդանյան, Սեյրան Արիստակեսյան, Սամվել Վարդանյան

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 41 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ Digitally signed by HARUTYUNYAN KRISTINE 7414760267

ստորագրությունը, անունը, ազգանունը

«Ճարտարապետության և Շինարարության Հայաստանի Ազգային Համալսարան» Հիմնադրամ

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

2023թ. դեկտեմբերի 31

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն……..…… 1

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն …… 6

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն ……...……..... 7

Զուտ ակտիվների մասին հաշվետվություն …….....8

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն …….....9

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ……...… .10

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Ճարտարապետության և Շինարարության Հայաստանի Ազգային Համալսարան» Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին և ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ճարտարապետության և Շինարարության Հայաստանի Ազգային Համալսարան» Հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 2023թ. դեկտեմբերի 31-ը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Կազմակերպության ֆինանսական վիճակը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտների (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր հաշվետվության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» հատվածում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկային կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և Հայաստանի Հանրապետության ֆինանսական հաշվետվությունների՝ մեր աուդիտի համար կիրառելի վարքագծի պահանջների, և պահպանել ենք էթիկային այլ պահանջները՝ համաձայն նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանքներ

Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները նախորդ տարի աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որի 2023թ. հունիսի 27-ի եզրակացությունում արտահայտվել է ձևափոխված աուդիտորական կարծիք:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան ֆինանսական հաշվետվությունների

Crowe and Asatryans LLC
"Dom Moskvy" Business Center,
7, Argishti str., 2nd floor,
Yerevan, 0015, Armenia
T. +(374) 60 53 23 23
+(374) 99 54 33 88
E-mail: general@crowe.am
www.crowe.com

Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ
"Դոմ Մոսկվի" Բիզնես Կենտրոն,
Արգիշտի փող., 7, 2-րդ հարկ,
ք. Երևան, 0015, ՀՀ
Հ. +(374) 60 53 23 23
+(374) 99 54 33 88
E-mail: general@crowe.am
www.crowe.com

կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու ընթացքում ղեկավարությունը պարտավոր է գնահատել Հիմնադրամի գործունեության անընդհատությունը, բացահայտելու գործունեության անընդհատության վերաբերյալ խնդիրները և առաջնորդվել հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքով, եթե ղեկավարությունը չի պատրաստվում լուծարել Հիմնադրամը կամ դադարեցնել գործունեությունը կամ չունի այլընտրանք քան գործունեության դադարեցումն է:

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները ամբողջությամբ վերցրած, բոլոր էական առումներով զերծ են սխալներից՝ պայմանավորված խարդախություններով կամ բացթողումներով, և պատրաստել աուդիտորական եզրակացություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը ամենաբարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ համաձայն աուդիտը մշտապես կհայտնաբերի էական սխալները և բացթողումները երբ դրանք առկա են: Սխալները կարող են առաջանալ խարդախության կամ բացթողումների հետևանքով և համարվում են էական, եթե առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել օգտագործողների տնտեսական որոշումների վրա, որոնք կայացվում են հիմք ընդունելով ֆինանսական հաշվետվությունները:

Աուդիտի ընթացքում, որն իրականացվել է ԱՄՍ համաձայն, մենք առաջնորդվել ենք մասնագիտական դատողությամբ և պրոֆեսիոնալ կասկածամտությամբ: Մենք նաև.

- Հայտնաբերել և գնահատել ենք էական սխալների ռիսկերը ֆինանսական հաշվետվություններում՝ պայմանավորված խարդախություններով և բացթողումներով, նախագծել և իրականացրել ենք աուդիտորական ընթացակարգեր այս ռիսկերին պատասխանելու նպատակով և ձեռք ենք բերել բավարար և համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքը արտահայտելու համար: Խարդախության հետևանքով առաջացած սխալի չհայտնաբերման ռիսկը ավելի բարձր է քան բացթողնման հետևանքով առաջացածինը, քանի որ խարդախությունը կարող է ընդգրկել գաղտնի պայմանավորվածություններ, խարդախություն, նպատակային բացթողում, յուրացում կամ նեքին վերահսկողական նորմերի շրջանցում:

- Պատկերացում ենք կազմել ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ, որպեսզի նախագծենք աուդիտորական ընթացակարգերը տվյալ հանգամանքներին համապատասխան, բայց ոչ կարծիք արտահայտել Հիմնադրամի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ:

- Գնահատել ենք Հիմնադրամի ղեկավարության կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանությունը և հաշվապահական ողջամիտ գնահատումները և կից բացահայտումները:

- Որոշել ենք ղեկավարության կողմից օգտագործված հաշվապահական հաշվառման գործունեության անընդհատության սկզբունքի օգտագործման համապատասխանությունը՝ ելնելով հավաքագրված աուդիտորական ապացույցներից, եղել են արդյոք էական անորոշություններ, որոնք կարող են առաջացնել կասկածներ, այն մասին, որ Հիմնադրամը կարող է ունենալ խնդիրներ գործունեության անընդհատության հետ կապված: Եթե կան նման անորոշություններ, ապա մենք պարտավոր ենք մեր եզրակացությունում օգտագործողների ուշադրությունը հրավիրել այդ բացահայտումներին, իսկ եթե այդ բացահայտումները բավարար չեն ապա պարտավոր ենք ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են աուդիտորական ապացույցների վրա, որոնք ձեռք են բերվել մինչև մեր կողմից աուդիտորական եզրակացություն տալու ամսաթիվը: Սակայն հետագա դեպքերը և հանգամանքները կարող են հանգեցնել Հիմնադրամին դադարեցնել գործունեության անընդհատությունը:

- Գնահատել ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր բնութագիրը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, և թե արդյոք ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այպես, որպեսզի համարվի ճշմարիտ ներկայացում:

Մենք ծանուցել ենք ղեկավարությանը աուդիտի շրջանակների, ժամանակացույցի և կարևոր բացահայտումների մասին՝ ներառյալ ներքին վերահսկողության համակարգում առկա թերությունների մասին, որոնք մենք հայտնաբերել ենք աուդիտի ընթացքում:

Մենք նաև ծանուցել ենք ղեկավարությանը, որ առաջնորդվել ենք էթիկայի դրույթներով, կապված անկախության հետ և բացահայտել ենք նրանց բոլոր փոխհարաբերությունները, որոնք կարելի է ողջամտորեն մտածել, որ կկրեն մեր հարաբերությունները և համապատասխան երաշխիքները, որտեղ որ կիրառելի է:

Այն բոլոր դիտարկումներից, որոնք քննարկվել են ղեկավարության հետ, ընտրվել են նրանք, որոնք առավել կարևոր են ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում և համարվում են, որպես հիմնական աուդիտորական հիմնահարցեր (ՀԱՀ): Մենք ներկայացրել ենք այդ խնդիրները աուդիտորական եզրակացությունում, եթե ՀՀ օրենսդրությամբ և սահմանված կարգերով չի արգելում հրապարակայնորեն բացահայտումը կամ, հազվադեպ դեպքերում, մենք որոշում ենք, որ նման բացահայտման դեպքում հասարակությանը հասցված վնասները ավելին կլինեն, քան նման բացահայտման օգուտները:

Աուդիտորական առաջադրանքի, որի արդյունքը այս աուդիտորական եզրակացությունն է, ղեկավարը Ալբերտ Ասատրյանն է:

31 մայիսի 2024թ.

Ալբերտ Ասատրյան

Տնօրեն-բաժնետեր
Առաջադրանքի պատասխանատու

Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ

ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

Հոգաբարձուների խորհրդի կազմը

Արմեն Ղուլարյան
Խորհրդի նախագահ, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ

Ալֆրեդ Քոչարյան
Խորհրդի անդամ, ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ

Քրիստինե Ղալեչյան
Խորհրդի անդամ, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

Սուրեն Թովմասյան
Խորհրդի անդամ, ՀՀ կադաստրի կոմիտեի նախագահ

Նաիրի Հարությունյան
Խորհրդի անդամ, ՀՀ ԿԳՄՍ նախարարի խորհրդական

Վլադ Ասատրյան
Խորհրդի անդամ, <<Կամուրջշին>> ՓԲԸ-ի խորհրդի նախագահ (համաձայնությամբ)

Գագիկ Վարդանյան
Խորհրդի անդամ, <<Բաղրամյանշին>> ԲԲԸ-ի տնօրենների խորհրդի նախագահ (համաձայնությամբ)

Սեյրան Արիստակեսյան
Խորհրդի անդամ, <<Արտաշատի ԷՑԾ>> ՍՊԸ-ի տնօրեն (համաձայնությամբ)

Սամվել Վարդանյան
Խորհրդի անդամ, <<Եղվարդշին>> ԲԲԸ-ի տնօրեն (համաձայնությամբ)

Մկրտիչ Մինասյան
Խորհրդի անդամ, Հայաստանի ճարտարապետների պալատի նախագահ (համաձայնությամբ)

Սուրեն Մխիթարյան
Խորհրդի անդամ, ՃՇՀԱՀ-ի Բարձրագույն մաթեմատիկայի և ֆիզիկայի ամբիոնի վարիչ, ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր

Վարդգես Գրիգորյան
Խորհրդի անդամ, ՃՇՀԱՀ-ի Շինարարական արտադրության տեխնոլոգիայի և կազմակերպման ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Կարեն Ռաշիդյանց
Խորհրդի անդամ, ՃՇՀԱՀ-ի Ճարտարապետական նախագծման և ճարտարապետական միջավայրի դիզայնի ամբիոնի վարիչ, տ.գ.թ. պրոֆեսոր

Հրանտ Թադևոսյան
Խորհրդի անդամ, ՃՇՀԱՀ-ի Գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ ժողովրդական նկարիչ

Հակոբ Գյուլզադյան
Խորհրդի անդամ, ՃՇՀԱՀ-ի Ճանապարհների և կամուրջների ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ

Նոննա Հովհաննիսյան
Խորհրդի անդամ, ՃՇՀԱՀ, Դիզայնի ֆակուլտետի առկա ուսուցման մագիստրատուրայի II-ին կուրսի ուսանող

Սուսաննա Հակոբյան
Խորհրդի անդամ, ՃՇՀԱՀ Կառավարման և տեխնոլոգիայի ֆակուլտետի մագիստրատուրայի I-ին կուրսի ուսանող

Սուսաննա Հարությունյան
Խորհրդի անդամ, ՃՇՀԱՀ Կառավարման և տեխնոլոգիայի ֆակուլտետի մագիստրատուրայի II-րդ կուրսի ուսանող

Վահան Սիմոնյան
Խորհրդի անդամ, ՃՇՀԱՀ, Շինարարության ֆակուլտետի առկա ուսուցման մագիստրատուրայի II-րդ կուրսի ուսանող

Խաչատուր Խաչատրյան
Խորհրդի քարտուղար, ՃՇՀԱՀ, հայցորդ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծնթ.	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ուսման վարձերից եկամուտ	4	2,114,121	1,823,568
Հետաձգված եկամուտ	4	462,802	377,514
Այլ եկամուտ	4	126,079	306,481
Ինքնարժեք	5	(2,527,857)	(2,388,715)
		175,145	118,848
Այլ եկամուտ	6	57,968	45,192
Այլ ծախսեր	6	(63,937)	(50,182)
Գործառնական գործունեության արդյունք		169,176	113,858
Ֆինանսական եկամուտ	7	39,473	66,638
Շահաբաժիններից եկամուտ	7	480	-
Այլ ֆինանսական հոդվածներ	8	9,871	(9,827)
Տարվա արդյունք մինչև հարկերը		219,000	170,669
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում	9	(39,330)	(28,119)
Տարվա արդյունք		179,670	142,550
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Հիմնական միջոցի վերագնահատումից աճի/(նվազման) փոփոխություն		(17,762)	19,441
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային գործիքներում ներդրումներից օգուտներ		4,740	-
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո		(13,022)	19,441
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		166,648	161,991

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2024թ.-ի մայիսի 31-ին՝

Մանուկ Բարսեղյան
Ռեկտորի ժ/պ

Քրիստինե Հարությունյան
Գլխավոր հաշվապահ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 39-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծնթ.	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	10	2,220,826	1,302,054
Ոչ նյութական ակտիվներ	11	8,980	10,224
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող բաժնային գործիքներ	12	6,240	1,500
Հետաձգված հարկային ակտիվ	13	16,374	15,214
		2,252,420	1,328,992
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	14	47,921	78,368
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	15	228,127	206,540
Դեպոզիտներ ՀՀ ֆինանսական կազմակերպություններում	16	857,953	420,000
Դրամական միջոցներ և համարժեքներ	17	205,890	439,863
Այլ ակտիվներ		8,485	29,407
		1,348,376	1,174,178
Ընդամենը ակտիվներ		3,600,796	2,503,170
Կապիտալ և պահուստներ			
Վերագնահատման պահուստ		38,575	20,813
Կուտակված շահույթ		1,125,021	963,113
Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ		4,740	-
Այլ տարրեր		35,005	35,005
		1,203,341	1,018,931
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Հետաձգված եկամուտ	18	1,641,447	880,250
		1,641,447	880,250
Ընթացիկ պարտավորություններ			
Հետաձգված եկամուտ	18	245,067	152,987
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	19	398,786	345,247
Պահուստներ	20	90,911	84,700
Ընթացիկ շահութահարկի գծովպարտավորություն		21,244	21,055
		756,008	603,989
Ընդամենը պարտավորություններ		2,397,455	1,484,239
		3,600,796	2,503,170

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 39-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Զուտ ակտիվների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Վերագնա-հատման պահուստ	Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ	Այլ տարրեր	Կուտակված արդյունք	Հիմադրին վերագրելի զուտ ակտիվներ
Մնացորդը առ 01 հունվարի 2022թ.	40,254	-	35,005	846,256	921,515
Տարվա արդյունք	-	-	-	161,991	161,991
Ճշգրտում	-	-	-	(45,134)	(45,134)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ					
Վերագնահատումից արժեքի աճ/(նվազում)	(19,441)	-	-	-	(19,441)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություն	-	-	-	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	(19,441)	-	-	-	(19,441)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	20,813	-	35,005	963,113	1,018,931
Տարվա արդյունք	-	-	-	179,670	179,670
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ					
Վերագնահատումից արժեքի աճ/(նվազում)	17,762	-	-	(17,762)	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություն	-	4,740	-	-	4,740
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	17,762	4,740	-	(17,762)	4,740
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	38,575	4,740	35,005	1,125,021	1,203,341

Զուտ ակտիվների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 39-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա արդյունք	179,670	142,550
Ճշգրտումներ՝		
Մաշվածություն և ամորտիզացիա	157,764	112,153
Շնորհներից եկամուտ	(462,802)	(377,514)
Հիմնական միջոցների օտարումից վնաս/(օգուտ)	36,762	(70,621)
Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)	39,330	28,119
Տոկոսային եկամուտ	(39,473)	(66,638)
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս	(9,871)	9,827
Գործառնական արդյունք նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	(98,620)	(222,124)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(21,587)	18,424
Պաշարների փոփոխություն	30,447	6,414
Պահուստների փոփոխություն	6,211	3,228
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	53,539	74,993
Այլ ակտիվներում փոփոխություն	(20,922)	(23,614)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	(50,932)	(142,679)
Վճարված շահութահարկ	(45,931)	(7,754)
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(96,864)	(150,433)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(239,015)	(110,731)
Դեպոզիտների մարում/(ներդրում), զուտ	(437,953)	130,000
Ստացված տոկոսներ	39,473	66,638
Ներդրումային գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	(637,495)	85,907
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված շնորհներ և շնորհների հետ վերադարձ, զուտ	520,812	296,716
Ստացված շահաբաժիններ	480	-
Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	521,292	296,716
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	(213,067)	232,190
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(20,906)	(23,584)
Դրամական միջոցների և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	439,863	231,257
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարեվերջի դրությամբ	205,890	439,863

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 39-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» Հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) բարձրագույն ուսումնական հաստատություն է, որի հիմնական գործունեությունը նպատակաուղղված է ճարտարագիտական, ճարտարապետական, բնագիտական, տեխնոլոգիական, տնտեսագիտական և այլ ուղղություններով կրթության, հիմնարար ու կիրառական գիտական հետազոտությունների և ուսումնառության կազմակերպմանը՝ հանրակրթական, միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական, հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերով և ուսուցման տարբեր ձևերով (առկա, հեռակա, հեռավար, դրսեկություն)՝ օրենքներով և այլ օրավական ակտերով սահմանված կարգով:

Համալսարանի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության Կառավարության (ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության): Համալսարանի հիմնադիր փաստաթուղթը կանոնադրությունն է:

Համալսարանը հիմնադրի որոշմամբ հիմնադրված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, ձեռք է բերում և իրականացնում կանոնադրությամբ ամրագրված իր խնդիրներին համապատասխան իրավունքներ ու պարտականություններ:

Համալսարանը գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Կենտրոնի տարածքային բաժնի կողմից 2014թ. ապրիլի 29-ին, գրանցման համարը՝ 222.160.811.876 է: Հանդիսանում է «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը:

Համալսարանի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը համալսարանի հոգաբարձուների խորհուրդն է (այսուհետ՝ հոգաբարձուների խորհուրդ), որը ստեղծվում է 5 տարի ժամկետով և բաղկացած է երեսուներկու անդամներից: Խորհուրդը ձևավորվում է հիմնադրի, լիազորված մարմնի (այսուհետ՝ լիազորված մարմին) ներկայացուցիչներից, ինչպես նաև համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողական ներկայացուցիչներից:

Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմից խորհրդի անդամության թեկնածուներ են առաջադրում հաստատության կառուցվածքային միավորները: Խորհրդի՝ պրոֆեսորադասախոսական կազմից ընտրված անդամները կազմում են խորհրդի անդամների 25 տոկոսը: Համալսարանի սովորողների ներկայացուցիչներից խորհրդի անդամության թեկնածուներ են առաջադրում ֆակուլտետների ուսանողական խորհուրդները՝ սովորողների կողմից ընտրված անդամները կազմում են խորհրդի անդամների 25 տոկոսը: Կազմակերպության անունից խորհրդի անդամներ է առաջադրում Հայաստանի Հանրապետության վարչապետը՝ պետական պաշտոն զբաղեցնող անձանցից (խորհրդի կազմի 25 տոկոսը): Լիազորված մարմնի կողմից խորհրդի անդամներ են առաջադրվում կրթության, գիտության, մշակույթի և տնտեսության տարբեր ոլորտների ճանաչված ներկայացուցիչներ, ինչպես նաև ճանաչված գործատուներ (խորհրդի կազմի 25 տոկոսը): 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ աշխատակիցների միջին ցուցակային թվաքանակը կազմել է 822 (2022թ.՝ 839) մարդ:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

Ներկայումս ՖՀՄՍ չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ՝ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ չի տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հիմքերի»:*

2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են վերագնահատված արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Կազմակերպության գործառնական ֆունկցիոնալ արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Կազմակերպության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Կազմակերպության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Հիմնադրամի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Չնայած ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են ղեկավարության կողմից ներկա ցուցանիշների վերաբերյալ տեղեկացված լինելու վրա, այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, հազվադեպ են համապատասխանում իրական արդյունքներին:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Ընկերությունն առաջին անգամ կիրառել է որոշակի ստանդարտներ և փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել որևէ այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որը թողարկվել է, բայց դեռ ուժի մեջ չի մտել:

ՖՀՄՍ հիմնադրամի կողմից ավարտված ծրագրեր	Նշված ամսաթվից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար	Կիրառելիությունը
ՖՀՄՍ 17. *«Ապահովագրության պայմանագրեր»*	1 Հունվարի, 2023թ.	Ընդունված
Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում. *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»* և ՖՀՄՍ պրակտիկայի գծով հայտարարություն 2 (Էականության որոշման դատողությունների իրականացում) – Հաշվապահական քաղաքականության բացահայտումներ	1 Հունվարի, 2023թ.	Ընդունված
Փոփոխություններ ՀՀՄՍ 12-ում. «*Շահութահարկեր»՝* Առանձին գործարքից բխող ակտիվների և պարտավորությունների հետ կապված հետաձգված հարկեր	1 Հունվարի, 2023թ.	Ընդունված
Փոփոխություններ ՀՀՄՍ 12-ում. «*Շահութահարկեր»՝* Միջազգային հարկային բարեփոխումներ. Սյուն երկու մոդելի կանոններ	23 Մայիսի, 2023թ.	Ընդունված
Փոփոխություններ ՀՀՄՍ 8-ում. *«Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ»՝* Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում	1 Հունվարի, 2023թ.	Ընդունված

ՖՀՄՍ 17. «Ապահովագրության պայմանագրեր»

Ընկերությունը ընթացիկ տարում առաջին անգամ ընդունել է ՖՀՄՍ 17-ը և հարակից փոփոխությունները: ՖՀՄՍ 17-ը սահմանում է ապահովագրական պայմանագրերի ճանաչման, չափման, ներկայացման և բացահայտման սկզբունքները և փոխարինում է ՖՀՄՍ 4 Ապահովագրության Պայմանագրեր ստանդարտին:

ՖՀՄՍ 17-ը տալիս է ընդհանուր մոդել (որը փոփոխված է ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագրերի համար), որը նկարագրված է որպես փոփոխական վճարի մոտեցում: Ընդհանուր մոդելը պարզեցվում է, եթե որոշակի չափանիշները բավարարվում են՝ չափելով մնացորդային ծածկույթի գծով պարտավորությունը՝ կիրառելով ապահովագրական վճարների բաշխման մոտեցումը:

Ընդհանուր մոդելը օգտագործում է ընթացիկ ենթադրություններ ապագա դրամական միջոցների հոսքերի գումարը, ժամկետները և անորոշությունը գնահատելու համար, և այն հստակորեն չափում է այդ անորոշության արժեքը: Այն հաշվի է առնում շուկայական տոկոսադրույքները և ապահովադիրների օպցիոնների ու երաշխավորությունների ազդեցությունը:

Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում. «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» և ՖՀՄՍ պրակտիկայի գծով հայտարարություն 2 (Էականության որոշման դատողությունների իրականացում) – Հաշվապահական քաղաքականության բացահայտումներ

Ընկերությունը ընթացիկ տարում առաջին անգամ ընդունել է ՀՀՄՍ 1-ի փոփոխությունները: Փոփոխությունները փոխում են ՀՀՄՍ 1-ի պահանջները՝ կապված հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտման հետ: Փոփոխությունները փոխարինում են ,նշանակալի

հաշվապահական հաշվառման քաղաքականությունե տերմինի բոլոր կիրառումները ,հաշվապահական հաշվառման քաղաքականության էական տեղեկատվությունե տերմինով: Հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղեկատվությունը էական է, եթե, երբ դիտարկվում է կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում ներառված այլ տեղեկատվության հետ միասին, ողջամտորեն ակնկալվում է, որ այն կազդի ընդհանուր նպատակի ֆինանսական հաշվետվությունների հիմնական օգտագործողների կողմից այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացված որոշումների վրա:

ՀՀՄՍ 1-ի օժանդակ պարագրաֆները նույնպես փոփոխվել են՝ պարզաբանելու համար, որ հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղեկատվությունը, որը վերաբերում է ոչ էական գործարքներին, այլ իրադարձություններին կամ պայմաններին, էական չէ և բացահայտման կարիք չունի: Հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղեկատվությունը կարող է էական լինել պայմանավորված գործարքների, այլ իրադարձությունների կամ պայմանների բնույթով, նույնիսկ եթե գումարները էական չեն: Այնուամենայնիվ, հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ էական գործարքներին, այլ իրադարձություններին կամ պայմաններին վերաբերող ոչ բոլոր տեղեկություններն են ինքնին էական:

ՀՀՄՍԽ-ն նաև մշակել է ուղեցույցներ և օրինակներ՝ ՖՀՄՍ պրակտիկայի գծով հայտարարություն 2-ում նկարագրված «չորս քայլ էականության գործընթացի» կիրառումը բացատրելու և ցուցադրելու համար:

Փոփոխություններ ՀՀՄՍ 12-ում. «Շահութահարկեր»՝ Առանձին գործարքից բխող ակտիվների և պարտավորությունների հետ կապված հետաձգված հարկեր

Ընկերությունը ընթացիկ տարում առաջին անգամ ընդունել է ՀՀՄՍ 12-ի փոփոխությունները: Փոփոխությունները նախատեսում են ևս մեկ բացառություն սկզբնական ճանաչման ազատումից: Ըստ փոփոխությունների, կազմակերպությունը չի կիրառում սկզբնական ճանաչումից ազատումը այն գործարքների համար, որոնք առաջացնում են հավասար հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերություններ:

Կախված կիրառելի հարկային օրենսդրությունից, հարկվող և նվազեցվող հավասար ժամանակավոր տարբերություններ կարող են առաջանալ ակտիվի և պարտավորության սկզբնական ճանաչման ժամանակ մի գործարքում, որը բիզնեսի միավորում չէ և չի ազդում ոչ հաշվապահական, ոչ հարկվող շահույթի վրա: Օրինակ, դա կարող է առաջանալ վարձակալության գծով պարտավորության և համապատասխան օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ճանաչման ժամանակ՝ կիրառելով ՖՀՄՍ 16-ը վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ:

ՀՀՄՍ 12-ի փոփոխություններից հետո կազմակերպությունից պահանջվում է ճանաչել համապատասխան հետաձգված հարկային ակտիվը և պարտավորությունը, ընդ որում ցանկացած հետաձգված հարկային ակտիվի ճանաչումը ենթակա է ՀՀՄՍ 12-ի փոխհատուցելիության չափանիշներին:

Փոփոխություններ ՀՀՄՍ 12-ում. «Շահութահարկեր»՝ Միջազգային հարկային բարեփոխումներ. Սյուն երկու մոդելի կանոններ

Ընկերությունը ընթացիկ տարում առաջին անգամ ընդունել է ՀՀՄՍ 12-ի փոփոխությունները: ՖՀՄՍ Խորհուրդը փոխում է ՀՀՄՍ 12-ի շրջանակը՝ պազաբանելու համար, որ ստանդարտը կիրառելի է շահութահարկի համար, որը բխում է հարկային օերնսդրությունից, որն ընդունվել կամ ըստ էության ընդունվել է ՏՀԶԿ-ի կողմից հրապարակված Սյուն երկու մոդելի կանոնների իրականացման համար, ներառյալ հարկային օրենսդրությունը, որը կիրառում է այդ կանոններում նկարագրված որակավորված նվազագույն տեղական լրացուցիչ հարկերը:

Փոփոխությունները ժամանակավոր բացառություն են մտցնում ՀՀՄՍ 12-ի հետաձգված հարկերի հաշվառման պահանջների մեջ, այնպես որ կազմակերպությունը կարող է չճանաչել և չբացահայտել Սյուն երկու շահութահարկի հետ կապված հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների մասին տեղեկատվությունը:

Փոփոխություններ ՀՀՄՍ 8-ում. «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ»՝ Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում

Փոփոխությունները փոխարինում են հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխության սահմանումը հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանմամբ: Ըստ նոր սահմանման, հաշվապահական հաշվառման գնահատումները, ֆինանսական հաշվետվություններում ներկայացված դրամական գումարներ են, որոնք ենթակա են չափման անորոշությունների:

Նոր և վերանայված ՖՀՍՍ ստանդարտներ, որոնք հրապարակված են, բայց դեռևս ուժի մեջ չեն մտել

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Ընկերությունը չի կիրառել հետևյալ նոր և վերանայված ՖՀՍՍ ստանդարտները, որոնք թողարկվել են, բայց դեռ ուժի մեջ չեն.

ՖՀՍՍ հիմնադրամի կողմից ավարտված ծրագրեր	Նշված ամսաթվից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար	Կիրառելիությունը
Փոփոխություններ ՖՀՍՍ 10-ում. «*Համախմբված ֆինանսական հաշվետվություններ*» և ՀՀՍՍ 28. «*Ներդրումներ ասոցիացված և դուստր ընկերություններում*» - Ներդրողի և նրա ասոցիացված ընկերության կամ համատեղ ձեռնարկության միջև ակտիվների վաճառք կամ ներդրում	Դեռևս չի սահմանվել ՖՀՍՍ Խորհրդի կողմից	-
Փոփոխություններ ՀՀՍՍ 1-ում. «*Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում*»՝ Պարտավորությունների դասակարգումը ընթացիկի և ոչ ընթացիկի	1 Հունվարի, 2024թ.	Հետընթաց
Փոփոխություններ ՀՀՍՍ 1-ում. «*Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում*»՝Կովենանտներով ոչ ընթացիկ պարտավորություններ	1 Հունվարի, 2024թ.	Հետընթաց
Փոփոխություններ ՖՀՍՍ 16-ում. «*Վարձակալություն*»՝ վարձակալության գծով պարտավորությունը վաճառք և հետադարձ վարձակալություն գործարքներում	1 Հունվարի, 2024թ.	Հետընթաց
Փոփոխություններ ՀՀՍՍ 7-ում. «*Հաշվետվություն դրամական հոսքերի մասին*» և *ՖՀՍՍ 17-ում* «*Ֆինանսական գործիքներ*»՝մատակարարների հետ ֆինանսական պայմանավորվածություններ	1 Հունվարի, 2024թ.	Առաջընթաց
Փոփոխություններ ՀՀՍՍ 21-ում. «*Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքները*»՝ Փոխանակելիության բացակայություն	1 Հունվարի, 2025թ.	Առաջընթաց

Փոփոխություններ ՖՀՍՍ 10-ում. «Համախմբված ֆինանսական հաշվետվություններ» և ՀՀՍՍ 28. «Ներդրումներ ասոցիացված և դուստր ընկերություններում» - Ներդրողի և նրա ասոցիացված ընկերության կամ համատեղ ձեռնարկության միջև ակտիվների վաճառք կամ ներդրում

ՖՀՍՍ 10-ի և ՀՀՍՍ 28-ի փոփոխությունները վերաբերում են իրավիճակներին, երբ ներդրողի և նրա ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկության միջև կա ակտիվների վաճառք կամ ներդրում: Մասնավորապես, փոփոխությունները նշում են, որ դուստր կազմակերպության նկատմամբ (որը բիզնես չէ) վերահսկողության կորստից առաջացող օգուտները կամ վնասները բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկության հետ գործարքում, ճանաչվում են մայր կազմակերպության շահույթում կամ վնասում միայն այդ ասոցիացված կազմակերպությունում կամ համատեղ ձեռնարկումում չկապակցված ներդրողների բաժնեմասերի չափով: Նմանապես, ցանկացած նախկին դուստր կազմակերպությունում (որը դարձել է ասոցիացված կամ համատեղ ձեռնարկում, որը հաշվառվում է սեփական կապիտալի մեթոդով) պահպանված ներդրումների իրական արժեքով վերաչափումից առաջացած օգուտները և վնասները ճանաչվում են նախկին մայր կազմակերպության շահույթում կամ վնասում միայն նոր ասոցիացված կազմակերպությունում կամ համատեղ ձեռնարկումում չկապակցված ներդրողների բաժնեմասերի չափով:

Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում. «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»՝ Պարտավորությունների դասակարգումը ընթացիկի և ոչ ընթացիկի

ՀՀՄՍ 1-ի փոփոխությունները, որոնք հրապարակվել են 2020թ. հունվարին, ազդում են միայն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում պարավորությունների՝ որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգման վրա, և ոչ ակտիվի, պարտավորության, եկամուտի կամ ծախսի ճանաչման գումարի կամ ժամկետի կամ դրանց մասին բացահայտված տեղեկատվության վրա:

Փոփոխությունները պարզաբանում են, որ պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ հիմնված է այն իրավունքների վրա, որոնք գոյություն ունեն հաշվետու ժամանակաշրջանի վերջում, նշում են, որ դասակարգման վրա չեն ազդում այն ակնկալիքները, թե արդյոք կազմակերպությունը կկիրառի իր՝ պարտավորության մարումը հետաձգելու իրավունքը, բացատրում են, որ իրավունքները գոյություն ունեն, եթե կովենանտները կատարված են հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, և տալիս են մարման սահմանումը՝ հստակեցնելով, որ մարումը վերաբերում է դրամական միջոցների, բաժնային գործիքների, այլ ակտիվների ծառայությունների փոխանցմանը կոնտրագենտին:

Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում. «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»՝ Կովենանտներով ոչ ընթացիկ պարտավորություններ

Փոփոխությունները սահմանում են, որ միայն այն կոմենանտներն են ազդում պարտավորության մարումը հաշվետու ամսաթվից հետո առնվազն տասներկու ամսով հետաձգելու իրավունքի վրա, որոնց կազմակերպությունը պետք է համապատասխանի հաշվետու ժամանակաշրջանի ավարտին կամ դրանից առաջ (և, հետևաբար, պետք է հաշվի առնվեն պարտավորության՝ որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգման ժամանակ):

ՖՀՄՍ Խորհուրդը նաև սահմանում է, պարտավորության մարումը հաշվետու ամսաթվից հետո առնվազն տասներկու ամսով հետաձգելու իրավունքը ազդեցություն չի կրում, եթե կազմակերպությունը պարտավոր է հետևել կովենանտներին միայն հաշվետու ժամանակաշրջանից հետո: Այնուամենայնիվ, եթե կազմակերպության՝ պարտավորությունների մարումը հետաձգելու իրավունքը ենթակա է կազմակերպության կողմից կովենանտների համապատասխանության հաշվետու ժամանակաշրջանից հետո տասներկու ամսվա ընթացքում, կազմակերպությունը բացահայտում է տեղեկատվությունը, որը ֆինանսական հաշվետվությունների օգտագործողներին հնարավորություն է տալիս հասկանալ հաշվետու ժամանակաշրջանից հետո տասներկու ամսվա ընթացքում մարման ենթակա պարտավորությունների ռիսկը: Սա ներառում է կովենանտների մասին տեղեկատվություն (ներառյալ կովենանտների բնույթը և թե երբ կազմակերպությունը պետք է համապատասխանի դրանց), հարակից պարտավորությունների հաշվեկշռային արժեքը և փաստերն ու հանգամանքները, եթե այդպիսիք կան, որոնք ցույց են տալիս, որ կազմակերպությունը կարող է դժվարություններ ունենալ կովենանտներին համապատասխանելու հարցում:

Փոփոխություններ ՖՀՄՍ 16-ում. «Վարձակալություն»՝ վարձակալության գծով պարտավորությունը վաճառք և հետադարձ վարձակալություն գործարքներում

ՖՀՄՍ 16-ի փոփոխությունները ավելացնում են հետագա չափման պահանջներ վաճառք և հետադարձ վարձակալություն գործարքների համար, որոնք բավարարում են ՖՀՄՍ 15-ի պահանջները՝ որպես վաճառք հաշվառվելու համար: Փոփոխությունները պահանջում են վաճառող-վարձակալից որոշել «վարձակալության վճարները» կամ ,վերանայված վարձակալական վճարները այնպես, որ վաճառող-վարձակալը չճանաչի օգուտ կամ վնաս, որը վերաբերում է վաճառող-վարձակալի կողմից պահպանված օգտագործման իրավունքին, մեկնարկի ամսաթվից հետո:

Փոփոխությունները չեն ազդում վաճառող-վարձակալի կողմից ճանաչված շահույթի կամ վնասի վրա՝ կապված վարձակալության մասնակի կամ լրիվ դադարեցման հետ: Առանց այս նոր պահանջների, վաճառող-վարձակալը կարող էր ճանաչել օգուտ իր պահպանած օգտագործման իրավունքից վարձակալության պարտավորության վերաչափման պատճառով (օրինակ՝ վարձակալության փոփոխության կամ վարձակալության ժամկետի փոփոխության հետևանքով)՝ կիրառելով ՖՀՄՍ 16-ի ընդհանուր պահանջները: Սա կարող էր հատկապես լինել հետադարձ վարձակալության դեպքում, որը ներառում է վարձակալության փոփոխական վճարներ, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքից:

Որպես փոփոխությունների մաս, ՖՀՄՍ Խորհուրդը փոփոխել է ՖՀՄՍ 16-ի ցուցադրական օրինակը և ավելացրել է նոր օրինակ՝ ցուցադրելու օգտագործման իրավունքի ձևով ակտիվի և

վարձակալության պարտավորության հետագա չափումը վաճառք և հետադարձ վարձակալություն գործարքում՝ փոփոխական վարձակալության վճարներով, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքից: Ցուցադրական օրինակները նաև պարզաբանում են, որ պարտավորությունը, որն առաջանում է վաճառք և հետադարձ վարձակալություն գործարքից, որը որակվում է որպես վաճառք ՖՀՄՍ 15-ի կիրառմամբ, վարձակալության գծով պարտավորություն է:

Փոփոխություններ ՀՀՄՍ 7-ում. «Հաշվետվություն դրամական հոսքերի մասին» և ՖՀՄՍ 17-ում «Ֆինանսական գործիքներ»՝ մատակարարների հետ ֆինանսական պայմանավորվածություններ

Փոփոխությունները լրացնում են ՀՀՄՍ 7-ի բացահայտման նպատակը՝ նշելով, որ կազմակերպությունից պահանջվում է բացահայտել տեղեկատվություն իր մատակարարների հետ ֆինանսական պայմանավորվածությունների մասին, որը ֆինանսական հաշվետվությունների օգտագործողներին հնարավորություն է տալիս գնահատել այդ պայմանավորվածությունների ազդեցությունը կազմակերպության պարտավորությունների և դրամական միջոցների հոսքերի վրա: Ի լրումն, ՖՀՄՍ 7-ը փոփոխվել է՝ որպես օրինակ ավելացնելով մատակարարների հետ ֆինանսական պայմանավորվածությունները կազմակերպության՝ իրացվելիության ռիսկի կենտրոնացման ենթարկվածության մասին տեղեկատվության բացահայտման պահանջների շրջանակում:

«Մատակարարների հետ ֆինանսական պայմանավորվածություններ» տերմինը սահմանված չէ: Փոխարենը, փոփոխությունները նկարագրում են պայմանավորվածության այնպիսի բնութագրերը, որոնց համար կազմակերպությունից կպահանջվի տրամադրել տեղեկատվությունը:

Փոփոխություններ ՀՀՄՍ 21-ում. «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքները»՝ Փոխանակելիության բացակայություն

Փոխանակելիության բացակայության վերաբերյալ փոփոխությունները (Փոփոխություններ ՀՀՄՍ 21-ում) փոփոխում են ՀՀՄՍ 21-ը որպեսզի

- հստակեցնի, թե երբ է արժույթը փոխանակելի այլ արժույթի, և երբ՝ ոչ
- հստակցնի, թե ինչպես է կազմակերպությունը որոշում փոխարժեքը, որը պետք է կիրառվի, երբ արժույթը փոխանակելի չէ
- պահանջի լրացուցիչ տեղեկատվության բացահայտում, երբ արժույթը փոխանակելի չէ

Հիմնադրամի ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը էական ազդեցություն կունենան Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ստորև ներկայացված են ՀՀ Կենտորնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքները.

Արժույթ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱՄՆ դոլար	404.79	393.57
Եվրո	447.90	420.06

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2 Հիմնական միջոցներ

Վերագնահատված արժեքով հաշվառվող հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները՝ շենքերը և շինությունները, որոնք օգտագործվում են Հիմնադրամի գործառնական գործունեության համար, մասնավորապես բարձրագույն ուսումնական կրթության ծառայությունների մատուցման և վարչական նպատակով, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված են վերագնահատված արժեքով, որը իրենից ներկայացնում է վերագնահատման օրվա դրությամբ հիմնական միջոցի իրական արժեքը՝ հանած հետագա կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Ցանկացած կուտակված մաշվածություն վերագնահատման օրը բացառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքից և ակտիվի վերագնահատված արժեքում ներկայացվում է զուտ արժեքը: Վերագնահատումներն իրականացվում են բավարար պարբերականությամբ այնպես, որ հաշվեկշռային արժեքն էականորեն չտարբերվի հաշվետու ամսաթվի դրությամբ իրական արժեքից:

Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճը վերագրվում է այլ համապարփակ եկամուտներին և արտացոլվում է սեփական կապիտալում՝ որպես վերագնահատման պահուստ: Սակայն, եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, այն ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես եկամուտ այն չափով, որով նախկինում նվազումը ճանաչվել էր որպես ծախս: Երբ հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն չափով, որը գերազանցում է նույն ակտիվի գծով նախորդ վերագնահատումից առաջացած վերագնահատման աճը:

Վերագնահատումից աճը ճանաչվում է կուտակված շահույթում: Կուտակված շահույթում ճանաչված վերագնահատումից աճը իրենից ներկայացնում է ակտիվի վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա

հաշվարկված մաշվածության տարբերությունը: Վերագնահատված հիմնական միջոցի միավորի իրացման կամ դուրսգրման դեպքում վերագնահատման պահուստում դրա գծով առկա վերագնահատումից աճը ուղղակիորեն վերագրվում է կուտակված շահույթին:

Սկզբնական արժեքով հաշվառվող հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների մնացած դասերը՝ մեքենաները և սարքավորումները, տրանսպորտային միջոցները և տնտեսական գույքը և գրադարանային ֆոնդը, որոնք օգտագործվում են ծառայությունների մատուցման կամ վարչական նպատակով, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված են հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում: Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր, շինություններ և կառուցվածքներ	10-50 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	1-10 տարի
Տնտեսական գույք	8 տարի
Տրանսպորտային միջոցներ	10 տարի
Գրադարանային ֆոնդ և այլ	1-10 տարի

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Հիմնադրամի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 1-10 տարի:

3.4 Վարձակալված ակտիվներ

Համաձայն ՀՀՍՍ 17-ի՝ «Վարձակալություն», վարձակալված ակտիվի սեփականության իրավունքը փոխանցվում է վարձակալին, երբ նրան են փոխանցվում սեփականության իրավունքի հետ կապված բոլոր ռիսկերը և օգուտները: Վարձակալված ակտիվը վարձակալության սկզբում ճանաչվում է վարձակալված գույքի իրական արժեքով կամ, ավելի ցածր լինելու դեպքում, նվազագույն վարձավճարների ներկա արժեքով՝ գումարած միանվագ վճարները, եթե այդպիսիք կան: Համապատասխան գումարը ճանաչվում է որպես ֆինանսական վարձակալության գծով պարտավորություն, անկախ նրանից, որ վարձակալական վճարների մի մասը կարող է վճարման ենթակա լինել մինչև վարձակալության սկիզբը:

Վարձակալված ակտիվների հետագա հաշվառումը, այսինքն՝ մաշվածության մեթոդի ընտրությունը և օգտակար ծառայության ժամկետների որոշումը, համապատասխանում են սեփականության իրավունքով Հիմնադրամին պատկանող նմանատիպ ակտիվների հաշվառմանը: Ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները նվազեցվում են վարձավճարների չափով՝ հանած ֆինանսական վճարը, որը ներառվում է ֆինանսական ծախսերում: Ֆինանսական վարձակալության տոկոսային մասն իրենից ներկայացնում է մնացորդային արժեքի հաստատուն մաս, որը վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

Մյուս բոլոր վարձակալությունները դիտվում են որպես գործառնական վարձակալություններ: Գործառնական վարձակալության գծով վճարները ճանաչվում են որպես ծախս՝ գծային հիմունքով: Վարձակալության հետ կապված ծախսերը, ինչպիսիք են պահպանման և ապահովագրության ծախսերը, ծախսագրվում են իրականացման պահին:

3.5 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ), և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.6 Ֆինանսական գործիքներ

Այս ծանոթագրությունը տեղեկատվություն է տալիս Խմբի ֆինանսական գործիքների վերաբերյալ, ներառյալ՝

- Հիմնադրամի բոլոր ֆինանսական գործիքների ներկայացումը
- Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են Խմբի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Խումբը դառնում է ֆինանսական գործիքների պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները չափվում են իրական արժեքով: Գործարքի հետ կապված ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը կամ թողարկմանը (բացառությամբ իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների) նախնական ճանաչման ժամանակ համապատասխանաբար գումարվում կամ պակասեցվում են ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքից: Իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսերը անմիջապես ճանաչվում են շահույթ կամ վնասում:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը

- Ֆինանսական ակտիվներ ամորտիզացված արժեքով չափվող
- Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներկայացվող (ԻԱՉԱՀՖԱ)
- Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող (ԻԱՉՇՎ)

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը

- Ֆինանսական պարտավորություններ ամորտիզացված արժեքով չափվող
- Ֆինանսական պարտավորություններ իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներկայացվող (ԻԱՉԱՀՖԱ)

Ֆինանսական ակտիվներ ամորտիզացված արժեքով չափվող

Պարտքային գործիքները, որոնք համապատասխանում են հետևյալ պայմաններին, սկզբնական ճանաչումից հետո չափվում են ամորտիզացված արժեքով, այն դեպքում, երբ.

- ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները պայմանագրային դրամական հոսքեր հավաքագրելու համար, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հատուկ օրերին ավելացնում են դրամական հոսքերը, որոնք պարզապես մայր գումարի և տոկոսագումարների վճարումներն են:

Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներկայացվող (ԻԱՉԱՀՖԱ)

- ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելում, որի նպատակն է ապահովել պայմանագրային դրամական միջոցների հոսքեր և պահվում են վաճառքի նպատակով, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հատուկ օրերին ավելացնում են դրամական հոսքերը, որոնք պարզապես մայր գումարի և տոկոսագումարների վճարումներն են:

Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող (ԻԱՉՇՎ)

Մնացած բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք չեն ներառվում վերոնշյալների մեջ, ինքնստինքյան չափվում են իրական արժեքով շահույթ կամ վնասի միջոցով (ԻԱՉՇՎ):

Ֆինանսական պարտավորություններ ամորտիզացված արժեքով չափվող

Բոլոր ֆինանսական պարտավորությունները, սկզբնական ճանաչումից հետո, չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը կամ ԻԱՉՇՎ մեթոդը: Այնուամենայնիվ, ֆինանսական պարտավորությունները, որոնք առաջանում են, երբ ֆինանսական ակտիվի փոխանցումը չի համապատասխանում ապաճանաչմանը կամ երբ շարունակական ներգրավվածության մոտեցում է կիրառվում և Խմբի կողմից, թողարկված ֆինանսակամ երաշխիքի պայմանագրերը չափվում են ստորև նշված հաշվապահական հաշվառման քաղաքականություններին համապատասխան՝

Ֆինանսական պարտավորություններ (ԻԱՉՇՎ) ներկայացվող

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ԻԱՉՇՎ ներկայացվող, երբ ֆինանսական պարտավորությունը հանդիսանում է՝ (ա) ձեռնարկատիրական գործունեության միավորման մեջ ձեռք բերողի պայմանական հատուցումը (բ) պահվում է առևտրային նպատակով կամ (գ) այն նախատեսված է ԻԱՉՇՎ-ի համար:

Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես առևտրային նպատակով պահվող եթե.

- այն բացառապես ձեռք է բերվել մոտ ապագայում վերավաճառքի նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման ժամանակ այն հանդիսանում է իդնտիֆիկացվող ֆինանսական գործիքների մի մաս, որը Խումբը միասին է կառավարում և ունի կարճաժամկետ շահույթ ստանալու փաստ:

- Այն ածանցյալ գործիք է, բացառությամբ այն ածանցյալ գործիքների, որոնք հանդիսանում են ֆինանսական երաշխիքի պայմանագրեր կամ նախանշված արդյունավետ հեջավորման գործիքներից:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը

Խումբը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը միայն երբ ակտիվից դրամական հոսքերի պայմանագրային իրավունքները սպառվում են կամ երբ այն փոխանցում է ֆինանսական ակտիվը և էականորեն ակտիվի սեփականության բոլոր ռիսկերն ու հատույցները մեկ այլ կազմակերպության: Եթե Խումբը ոչ փոխանցում է, և ոչ էլ պահպանում սեփականության հետ կապված էականորեն բոլոր ռիսկերն ու հատույցները և շարունակում է վերահսկել փոխանցված ակտիվը, ապա Խումբը ճանաչում է իր հետաքրքրությունը ակտիվի հանդեպ և այն գումարների հետ կապված պարտավորությունը, որն այն կարող է վճարել: Եթե Խումբը կրում է փոխանցված ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերը և հատույցները, ապա Խումբը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև ճանաչում է ստացված օգուտների գրավադրված փոխառությունները:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի ապաճանաչման ժամանակ ակտիվի մնացորդային արժեքի և հատուցված կամ հատուցվող գումարի տարբերությունը ճանաչվում է շահույթ կամ վնասում: Ի հավելում, պարտքային գործիքի մեջ ներդրման, դասակարգված որպես «Իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող» (ԻԱՉԾՎ), ապաճանաչման ժամանակ ներդրումների վերագնահատման պահուստում նախկինում հաշվարկված կուտակային օգուտ կամ վնասը վերադասակարգվում է շահույթ կամ վնասում: Եվ հակառակը, բաժնային գործիքի մեջ ներդրման ապաճանաչման ժամանակ, որը սկզբնական ճանաչման ժամանակ Խումբը ընտրել է ԻԱՉԾՎ մեթոդը ներդրումների վերագնահատման պահուստում նախկինում հաշվարկված կուտակային օգուտ կամ վնասը չի վերադասակարգվում շահույթ կամ վնասում, այլ տեղափոխվում է կուտակված շահույթ կամ վնաս:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը

Խումբը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը միայն և միայն, երբ Խումբը ֆինանսական գործիքի պարտավորություններից ազատվել է, չեղարկվել է կամ սպառվել է պայմանագրային պարտավորությունը: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության մնացորդային արժեքի և փոխհատուցված կամ փոխհատուցվող գումարի միջև տարբերությունը ճանաչվում է շահույթ կամ վնասում:

Երբ Խումբը առկա վարկատուի հետ մեկ պարտքային գործիքը փոխանակում է մյուսի հետ՝ զգալիորեն տարբեր պայմաններով, ապա այսպիսի փոխանակումը դիտարկվում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Նույն կերպ, Խումբը առկա պարտավորության կամ դրա մի մասի էական պայմանների փոփոխությունը դիտարկում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր պարտավորության ճանաչում: Ենթադրվում է, որ պայմանները էական տարբեր են համարվում, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքը, ներառյալ բոլոր վճարված վճարումների և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված և ստացված վճարումների տարբերությունը, առնվազն 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացորդային դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքից: Եթե փոփոխությունը էական չէ մինչև փոփոխությունը պարտավորության մնացորդային արժեքի և փոփոխությունից հետո դրամական հոսքերի ներկա արժեքի միջև, ապա տարբերությունը պետք է ճանաչվի շահույթ կամ վնասում այլ եկամուտների կամ վնասների հետ մեկտեղ, որպես փոփոխությունից շահույթ կամ վնաս:

Ֆինանսական գործիքների արժեզրկում

Պարտքային գործիքներում ներդրումների արժեզրկումից կորուստները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով կամ ԻԱՉԱՀԱ-ով, Խումբը ճանաչում է հետևյալ դեպքերում՝ սպասվելիք վարկային կորուստների, ֆինանսական վարձակալության դեբիտորական պարտքերի, առևտրային դեբիտորական պարտքերի և պայմանագրային ակտիվների գծով, ինչպես նաև ֆինանսական երաշխիքի պայմանագրերի մասով: «Դեբիտորական պարտքերի սպասվող կորուստների» (ԴՊՍԿ) գումարները, սկսած համապատասխան ֆինանսական գործիքի սկզբնական ճանաչումից, յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին թարմացվում են՝ վարկային ռիսկում փոփոխություններն արտացոլելու համար:

Խումբը միշտ ճանաչում է ԴՊՍԿ-ը առևտրային դեբիտորական պարտքերի, պայմանագրային ակտիվների և ֆինանսական վարձակալությունից դեբիտորական պարտքերի համար: Այս ֆինանսական ակտիվներից սպասվող վարկային կորուստները գնահատվում են՝ օգտագործելով պահուստի հաշվարկման համար մշակված համապատասխան մատրիցան՝ հիմնվելով Խումբի պատմական վարկային կորուստի փորձի վրա, ճշգրտված պարտապանների համար հատուկ գործոններով, ընդհանուր տնտեսական պայմաններով և ընթացիկ, ինչպես նաև հաշվետու ամսաթվի պայմաններին կանխատեսվող ուղղության գնահատմամբ, ներառյալ երբ կիրառելի է դրամի արժեքը ժամանակի մեջ:

Մյուս բոլոր ֆինանսական գործիքների համար, Խումբը ճանաչում է ԴՊՍԿ-ն, երբ տեղի է ունեցել սկզբնական ճանաչումից ի վեր վարկային ռիսկի զգալի աճ: Այնուամենայնիվ, եթե ֆինանսական գործիքի վարկային ռիսկը զգալի չի բարձրացել սկզբնական ճանաչումից ի վեր, ապա Խումբը այդ ֆինանսական գործիքից կորուստի պահուստը չափում է 12 ամսվա ԴՊՍԿ-ի համարժեք գումարով:

ԴՊՍԿ-ն իրենից ներկայացնում է սպասվող վարկային կորուստներ ֆինանսական գործիքի ամբողջ կյանքի ընթացքում հնարավոր դեֆոլտի արդյունքում: Եվ հակառակը, 12 ամսվա ԴՊՍԿ-ն իրենից ներկայացնում է կյանքի ընթացքում ԴՊՍԿ-ի այն մասը, որը սպասվում է որ կառաջանա ֆինանսական գործիքի հնարավոր դեֆոլտից հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում:

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 23-ում:

3.7 Ստացված շնորհներ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Հիմնադրամը շնորհը ստանալու է: Հիմնադրամը ստանում է ակտիվներին վերաբերող և եկամուտներին վերաբերող շնորհներ:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Հիմնադրամի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սիստեմատիկորեն փոխանցվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Շնորհը, որը հատկացվում է Հիմնադրամին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

3.8 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Կազմակերպությունը ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

3.9 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ՝ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, որոնք կապված են դուստր ընկերություններում և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների ու համատեղ ձեռնարկումներում մասնակցությունների հետ, բացառությամբ այն դեպքերի, որտեղ Կազմակերպությունը ի վիճակի է վերահսկելու ժամանակավոր տարբերության հակադարձումը և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի տեսանելի ապագայում:Նմանատիպ ներդրումների և մասնակցությունների հետ կապված նվազեցվող ժամանակավոր տարբերություններից առաջացող հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որով հավանական է հարկվող շահույթի առկա լինելը, որի դիմաց կարող է օգտագործվել ժամանակավոր տարբերությունը, և որը կմարվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Կազմակերպությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային

հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Կազմակերպությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

3.10 Զուտ ակտիվներ

Հիմնադրամը չունի թողարկվող կապիտալի գործիքներ, և համաձայն Հիմնադրամների մասին ՀՀ օրենքի՝ հոգաբարձուները չեն կարող ունենալ նրա շահույթից բաշխման ակնկալիքներ:

4 Ուսման վարձերից եկամուտ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ուսման վարձերից եկամուտ	2,110,478	1,821,405
Ակտիվներին վերաբերող շնորհներից	87,198	66,522
Եկամուտներին վերաբերող շնորհներից	375,604	310,992
Ծառայությունների մատուցումից եկամուտ	125,879	306,281
Լրացուցիչ կրթությունից և այլ ուսումնականվճարներից եկամուտ	3,643	2,163
Այլ եկամուտ	200	200
	2,703,002	2,507,563

5 Ինքնարժեք

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ուսումնական գործունեության գծով ծախսեր		
Աշխատավարձ	1,628,402	1,593,612
Վաճառված ապրանքների ինքնարժեք	761	1,091
Մարկետինգի և գովազդի գծով ծախսեր	2,230	4,494
Ուսման վարձերի գծով զեղչեր	57,573	42,554
Հիմնական միջոցների մաշվածության գծով ծախս	68,380	58,859
Հիմնական միջոցների սպասարկման և նորոգման գծով ծախս	12,536	5,023
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր ախսեր	22,256	25,311
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	69,020	68,016
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	1,845	1,104
Բանկային ծառայության և ապահովագրական ծախսեր	464	433
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	8,240	3,925
Այլ ծախսեր	49,194	32,376
	1,920,901	1,836,798
Շնորհների և ծրագրերի գծով ծախսեր		
Աշխատավարձ	14,863	14,808
Հիմնական միջոցների մաշվածության գծով ծախս	89,372	53,257
Այլ ծախսեր	63,546	25,818
	167,781	93,883
Գիտական գործունեության գծով ծախսեր		
Աշխատավարձ	274,792	244,172
Այլ ծախսեր	11,683	2,824
	286,475	246,996
Եկամտային պայմանագրերի կատարման ծախսեր		
Աշխատավարձ	118,971	61,852
Այլ ծախսեր	13,754	146,186
	132,725	208,038

Լրացուցիչ կրթության և այլ ուսումնական գործունեության գծով ծախսեր		
Աշխատավարձ	6,929	-
Այլ ծախսեր	13,046	3,000
	19,975	3,000
	2,527,857	2,388,715

6 Այլ եկամուտ/(ծախսեր)

Այլ եկամուտներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Եկամուտներ տույժերից, տուգանքներից, նյութական վնասի փոխհատուցումից	184	-
Եկամուտներին վերաբերող շնորհներից	-	-
Եկամուտներ ստացված կրթաթոշակներից և սոց.փաթեթից	42,568	32,600
Գործառնական այլ եկամուտներ	15,216	12,592
	57,968	45,192

Այլ ծախսեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ծախսեր տույժերից, տուգանքներից	(3,989)	(162)
Անհատույց տրված ակտիվների գծով ծախսեր	(10,578)	(14,097)
Շահութահարկի ճշգրտում	-	-
Արձակուրդային պահուստաֆոնդի գծով ծախս	(6,212)	(3,227)
Կրթաթոշակների և սոց.փաթեթի գծով ծախսեր	(43,158)	(32,580)
Հիմնական միջոցների լուծարման ծախսեր	-	(116)
	(63,937)	(50,182)

7 Ֆինանսական եկամուտ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Կարճաժամկետ բանկային ավանդներից տոկոսային եկամուտ	39,473	66,638
Շահաբաժնից եկամուտ	480	-
Ընդհանուր ֆինանսական եկամուտ	39,953	66,638
Զուտ ֆինանսական եկամուտ/(ծախսեր)	39,953	66,638

8 Այլ ֆինանսական հոդվածներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Արտարժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից եկամուտ		
- Դրամական միջոցներ և համարժեքներ	29,811	22,454
- Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,198	-
	31,009	22,454
Արտարժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից ծախս		
- Դրամական միջոցներ և համարժեքներ	(19,187)	(32,281)
- Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	(58)	-
- Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	(1,893)	-
	(21,138)	(32,281)
Արտարժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից զուտ եկամուտ/(ծախս)	9,871	(9,827)

9 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	(40,490)	(28,809)
Հետաձգված հարկ	1,160	690
	(39,330)	(28,119)

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ)	219,000		170,669	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2022թ.՝ 18%)	(39,420)	18.0	30,720	18.0
(Չհարկվող եկամուտ)/ չնվազեցվող ծախսեր, զուտ	90	0.0	(58,839)	(34.5)
Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)	(39,330)	18.0	(28,119)	(16.5)

10 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Շենքեր, շինություններ	Կառուցվածքներ	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Տնտեսական գույ և այլ	Գրադարանային ֆոնդ	Ընդամենը
Սկզբնական արժեք							
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	1,260,903	44,466	1,091,003	97,391	202,663	9,622	2,706,048
Ավելացում	1,578	-	131,500	-	19,075	-	152,153
Օտարում և շահագործումից հանում	-	-	(16,007)	-	(3,464)	(46)	(19,517)
Կապիտալացում	-	-	2,279	-	30	-	2,309
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,262,481	44,466	1,208,775	97,391	218,304	9,576	2,840,993
Ավելացում	843,608	-	145,679	-	20,400		1,009,687
Օտարում և շահագործումից հանում	(51,026)	-	(6,110)	-	(8,834)		(65,970)
Կապիտալացում	97,707	-	2,069	-	402		100,178
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,152,770	44,466	1,350,413	97,391	230,272	9,576	3,884,888
Կատարված մաշվածություն և արժեզրկում							
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	(286,166)	(11,509)	(896,279)	(73,129)	(173,752)	(8,849)	(1,449,684)
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	(28,842)	(1,722)	(64,279)	(6,048)	(7,473)	(343)	(108,707)
Շահագործումից հանում	-	-	15,942	-	3,464	46	19,452
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(315,008)	(13,231)	(944,616)	(79,177)	(177,761)	(9,146)	(1,538,939)
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	(42,034)	(1,722)	(91,904)	(4,707)	(13,623)	(343)	(154,333)
Օտարման հետևանքով դուրս գրում	14,265	-	6,111		8,834		29,210
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(342,777)	(14,953)	(1,030,409)	(83,884)	(182,550)	(9,489)	(1,664,062)
Հաշվեկշռային արժեք							
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	974,737	32,957	194,724	24,262	28,911	773	1,256,364
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	947,473	31,235	264,159	18,214	40,543	430	1,302,054
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,809,993	29,513	320,004	13,507	47,722	87	2,220,826

Հիմնադրամի հիմնական միջոցները գրավադրված չեն և հիմնական միջոցների վրա չկան որևէ սահմանափակումներ:

11 Ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ	Համակարգչային ծրագրեր և այլ ոչ նյութական ակտիվներ	Լիցենզիաներ, վկայագրեր և արտոնագրեր	Ընդամենը
Սկզբնական արժեք			
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	17,813	12,276	30,089
Ավելացում	1,197	-	1,197
Օտարում	-	-	-
Շահագործումից հանում	(1,138)	-	(1,138)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	17,872	12,276	30,148
Ավելացում	470	-	470
Օտարում	-	-	-
Շահագործումից հանում	-	-	-
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	18,342	12,276	30,618
Կատարված մաշվածություն և արժեզրկում			
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	(9,053)	(10,362)	(19,415)
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	(1,531)	(1,915)	(3,446)
Օտարման հետևանքով դուրս գրում	1,022	1,915	2,937
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(9,562)	(10,362)	(19,924)
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	(1,714)	(1,915)	(3,629)
Օտարման հետևանքով դուրս գրում	-	1,915	1,915
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(11,276)	(10,362)	(21,638)
Հաշվեկշռային արժեք			
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	8,760	1,914	10,674
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,310	1,914	10,224
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,066	1,914	8,980

12 Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող բաժնային գործիքներ

2014թ.-ին Հիմնադրամը ձեռք է բերել ՀՀ ֆինանսական հաստատության 3,000 հատ հասարկ բաժնետոմսեր: Մեկ բաժնետոմսերի անվանական արժեքը ձեռքբերման պահին կազմել է՝ 500 դրամ:

Հիմնադրամին պատկանող բաժնետոմսերի շուկայական արժեքը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է՝ 6,240 հազար դրամ: Իրական արժեքի փոփոխությունը արտացոլվել է այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Հիմնադրամի ղեկավարության դատողությամբ բաժնետոմսերի իրական արժեքը մոտ է դրանց անվանական արժեքին:

13 Հետաձգված հարկ

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Տարեսկզբի մնացորդ	15,214	14,524
Շահույթում կամ վնասում ճանաչված (ծախս)/փոխհատուցում (տես՝ ծանոթագրություն 9)	1,160	581
Այլ համապարփակ ֆինանսակն արդյունքնեում ճանաչված (ծախս)/փոխհատուցում	-	110
Տարեվերջի մնացորդ	16,374	15,214

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2023թ. հունվարի 1	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված	Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	2023թ. դեկտեմբերի 31
Հետաձգված հարկային ակտիվներ				
Չօգտագործված արձակուրդային պահուստ	15,246	-	1,129	16,375
	15,246	-	1,129	16,375
Հետաձգված հարկային պարտավորություններ				
Հիմնական միջոցներ	31	-	(31)	-
	31	-	(31)	-
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	15,215	-	1,160	16,375

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2022թ. հունվարի 1	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված	Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	2022թ. դեկտեմբերի 31
Հետաձգված հարկային ակտիվներ				
Առևտրայի և այլ դեբիտորական պարտքեր				-
Չօգտագործված արձակուրդային պահուստ	14,665	-	581	15,246
	14,665	-	581	15,246
Հետաձգված հարկային պարտավորություններ				
Հիմնական միջոցներ	141	(110)	-	31
	141	(110)	-	31
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	14,524	110	581	15,214

14 Պաշարներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հումք և նյութեր	13,451	19,325
Շինանյութեր	3,460	22,807
Պահեստամասեր	6,708	8,193
Վառելիք	527	658
Ապրանքներ	498	537
Այլ	23,277	26,848
	47,921	78,368

15 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր ուսման վարձերի գծով	207,264	184,947
Առևտրային դեբիտորական պարտքեր	8,951	6,882
Տրված կանխավճարներ	6,428	3,958
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	5,353	8,136
Այլ առևտրային դեբիտորական պարտքեր	131	2,617
	228,127	206,540

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Հիմնադրամը լրիվ պահուստավորում է բոլոր այն առևտրային դեբիտորական պարտքերը, որոնց մարման ժամկետից անցել է ավելի քան 365 օր, բացառությամբ ուսման վարձերի, քանի որ, հիմնվելով անցյալի փորձի վրա, մարման ժամկետը 365 օրով գերազանցելու դեպքում առևտրային դեբիտորական պարտքերը համարվում են անհավաքագրելի:

Ղեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեից դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

16 Դեպոզիտներ ՀՀ ֆինանսական կազմակերպություններում

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ՀՀ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	857,953	420,000
	857,953	420,000

2023թ. և 2022թ.-ին Հիմնադրամը ժամկետային ավանդներ (դեպոզիտներ) է տեղաբաշխել հայկական բանկերում:

Բոլոր դեպոզիտները կարճաժամկետ են: Դեպոզիտների գծով 2023թ.-ին հաշվեգրվել է 39,473 հազար դրամ (2022թ.՝ 66,638 հազար դրամ): Տեղաբաշխված դեպոզիտների տոկոսները վճարվում են ամսական կտրվածքով: Հիմնադրամի դեպոզիտները տեղաբաշխված են ՀՀ դրամով և Եվրոյով: 2023թ.-ին ՀՀ դրամով տեղաբաշխված դեպոզիտների տարեկան տոկոսադրույքը կազմե է՝ 9.7%-10.4%, իսկ Եվրոյինը՝ 2.5%:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի տեղաբաշխված դեպոզիտներից 70,000 հազար դրամ գրավադրված է բանկային երաշխիք ստանալու համար: Երաշխիքի գումարը կազմել է՝ 57,508 հազար դրամ:

Հիմնադրամի ղեկավարությունը համոզված է, որ բանկային երաշխիքները ամբողջությամբ կմարվեն ժամանակին:

17 Դրամական միջոցներ և համարժեքներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկային հաշիվներ	205,890	439,863
	205,890	439,863

Դրամական միջոցների վրա չկան որևէ սահմանափակումներ:

18 Հետաձգված եկամուտ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ոչ ընթացիկ		
Հետաձգված եկամուտ ակտիվներին վերաբերող շնորհներից	1,641,447	880,250
	1,641,447	880,250
Ընթացիկ		
Հետաձգված եկամուտ ակտիվներին վերաբերող շնորհներից	-	-
Հետաձգված եկամուտ եկամուտներին վերաբերող շնորհներից	245,067	152,987
	245,067	152,987
	1,886,514	1,033,237

Ստորև ներկայացված է ակտիվներին վերաբերող շնորհների շարժը՝

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մնացորդը տարեսկզբին	880,250	873,603
Տարվա ընթացքում ստացված	837,105	19,711
Տարվա ընթացքում ճանաչված	(87,198)	(66,522)
Տեղափոխում ակտիվներին վերաբերող շնորհներին	11,290	53,458
Արտարժույթի ազդեցություն	-	-
Մնացորդը տարեվերջին	1,641,447	880,250

19 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	4,133	4,841
Ստացված կանխավճարներ	392,356	326,634
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	86	2,042
Այլ կրեդիտորական պարտքեր	2,211	11,730
	398,786	345,247

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվառվում: Հիմնադրամն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

20 Պահուստներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Ընթացիկ	Ոչ ընթացիկ	Ընթացիկ	Ոչ ընթացիկ
Պահուստներ շարունակական գործառնական ծախսումների գծով	90,911	-	84,699	-

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ավելացում	Հակադարձում	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Չօգտագործված արձակուրդային պահուստ	90,911	6,212	-	84,699
	90,911	6,212	-	84,699

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ավելացում	Հակադարձում	2022թ. հունվարի 1-ի դրությամբ
Չօգտագործված արձակուրդային պահուստ	84,699	3,227	-	81,472
	84,699	3,227	-	81,472

21 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

22 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Հիմնադրամն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, հազվադեպ են համապատասխանում իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական ժամանակահատվածում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

23 Ֆինանսական գործիքներ

23.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.6-ում:

23.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ՝ ամորտիզացված արժեքով չափվող.		
- Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	216,346	194,446
- Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող բաժնային գործիքներ	6,240	1,500
- Դեպոզիտներ ՀՀ ֆինանսական կազմակերպություններում	857,953	420,000
- Դրամական միջոցներ և համարժեքներ	205,890	439,863
	1,286,429	1,055,809

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական պարտավորություններ՝ ամորտիզացված արժեքով չափվող.		
- Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	6,344	16,571
	6,344	16,571

23.3 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Կազմակերպությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկն է պարտքային ռիսկը:

Կազմակերպությունը չի ներգրավված սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Կազմակերպությունը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

23.4 Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսակական գործիքների օգտագործման ընթացքում Կազմակերպությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի և որոշակի այլ գնային ռիսկերի, որոնք բխում են ինչպես գործառնական գործունեությունից:

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Կազմակերպությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Այս ռիսկի ազդեցությունը Կազմակերպության համար առաջանում է տարբեր ֆինանսական գործիքներից, ինչպիսիք են դեբիտորական պարտքերը և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները և այլն: Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքները		
- Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	216,346	194,446
- Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող բաժնային գործիքներ	6,240	1,500
- Դեպոզիտներ ՀՀ ֆինանսական կազմակերպություններում	857,953	420,000
- Դրամական միջոցներ և համարժեքներ	205,890	439,863
	1,286,429	1,055,809

Հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի գծով նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ:

գ) Իրացվելիության ռիսկ

Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ ժամանակին գործառնական պարտավորությունները մարելու նպատակով:

23.5 Ֆինանսական դրության մասին հաշվետվությունում ճանաչված իրական արժեքի չափումները և իրական արժեքի հիերարխիա

Ֆինանսական հաշվետվությունները կազմելիս Հիմնադրամի որոշ ակտիվներ և պարտավորություններ չափվում են իրական արժեքով: Հիմնադրամի ղեկավարությունը սահմանում է իրական արժեքի չափման համապատասխան գնահատման տեխնիկա:

Հազար դրամ	Իրական արժեքի չափման հիերարխիա			
Նկարագրություն	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ				
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	216,346	216,346	-	-
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող բաժնային գործիքներ	6,240	6,240	-	-
Դեպոզիտներ ՀՀ ֆինանսական կազմակերպություններում	857,953	857,953	-	-
Դրամական միջոցներ և համարժեքներ	205,890	205,890	-	-
	1,286,429	1,286,429	-	-

Հազար դրամ		Իրական արժեքի հիերարխիայի չափում		
Նկարագրություն	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Իրական արժեքով չափվող պարտավորություններ				
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	6,344	6,344	-	-
Ընդամներ	6,344	6,344	-	-

Հազար դրամ		Իրական արժեքի չափման հիերարխիա		
Նկարագրություն	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ				
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	194,446	194,446	-	-
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող բաժնային գործիքներ	1,500	1,500	-	-
Դեպոզիտներ ՀՀ ֆինանսական կազմակերպություններում	420,000	420,000	-	-
Դրամական միջոցներ և համարժեքներ	439,863	439,863	-	-
Ընդամներ	1,055,809	1,055,809	-	-

Հազար դրամ		Իրական արժեքի հիերարխիայի չափում		
Նկարագրություն	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Իրական արժեքով չափվող պարտավորություններ				
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	16,571	16,571	-	-
Ընդամներ	16,571	16,571	-	-

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով Հիմնադրամը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),

- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),

- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են պատմական արժեքի հիման վրա, բացառությամբ որոշ կետերի և ֆինանսական գործիքների, որոնք, յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում, չափվել են վերագնահատված արժքով կամ իրական արժեքով, ինչպես ներկայացված է հաշվապահական հաշվառման քաղաքականությունում:

Պատմական արժեքը սովորաբար հիմնված է ապրանքների և ծառայությունների դիմաց տրված հատուցման իրական արժեքի վրա:

24 Պայմանականություններ

24.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ:

24.2 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովա- գրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Կազմակերպությունը չունի ապահովագրական պայմանգրեր:

24.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

24.4 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Շրջակա միջավայրը, որտեղ Կազմակերպությունը գործում է, չի պահանջում, որպեսզի Կազմակերպությունը ներկայացնի շրջակա միջավայրի վրա իր ունեցած ազդեցության տարեկան հաշվետվություն կամ համանման զեկույց: Ղեկավարության համոզմամբ՝ Կազմակերպությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ

Կազմակերպությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի:

25 Գործարքներ կապակցված կողմերի միջև

Հիմնադրամի կապակցված կողմերն են հանդիսանում Հիմնադրամի հոգաբաձուների խորհրդի անդամները, Հիմնադրամի ղեկավարությունը և Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ի դեմս ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և ՀՀ Գիտության կոմիտեն:

26 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառում է՝ Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Աշխատակիցներին հատուցումներ» հոդվածում.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Աշխատավարձ և պարգևատրումներ, ներառյալ սոցիալական ապահովության վճարները	108,355	97,589
	108,355	97,589

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 23.09.2024 17:36